ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ
0095, ՀՀ, Երևան, Մ.Բաղրամյան պող. 19, +374 11 51 32 05,

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԽՈՐՀՐԴԻՆ

ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ

(«Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 41-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետին համապատասխան «Կառավարության հրաժարականի և նոր կառավարություն ձևավորելու անհրաժեշտության մասին» Ազգային ժողովի ուղերձի նախագիծը արտահերթ նիստում քննարկելու վերաբերյալ)

Նկատի առնելով հարցի հրատապությունը, միջնորդում ենք Ազգային ժողովի խորհրդին՝ կայացնելու որոշում Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն ¼-ի նախաձեռնությամբ արտահերթ նիստը գումարել հնարավորինս շուտ՝ հունիսի 11-ից մինչև հունիսի 17-ը ցանկացած օր: Արտահերթ նիստի գումարման ժամը նախատեսել 18:30-ին, իսկ հունիսի 12-ին կամ հունիսի 13-ին գումարվող նիստերի դեպքում, արտահերթ նիստը գումարել Ազգային ժողովի հերթական նիստերում Սահմանադրությամբ և «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի համաձայն պարտադիր քննարկվող հարցերի քննարկման ավարտից անմիջապես հետո: Ազգային ժողովի արտահերթ նիստ գումարելու վերաբերյալ առաջարկությունը ներկայացվել է Սահմանադրության և օրենքի պահանջներին համապատասխան, բխում է իրավական և ժողովրդավարական պետության հիմնարար սկզբունքերից:

«ՀԱՅԱՍՏԱՆ»
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ
ՍԵՅՐԱՆ ՕՀԱՆՅԱՆ

«ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ»
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ
ՀԱՅԿ ՄԱՄԻՋԱՆՅԱՆ

10.06.2023թ.

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

«ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀՐԱԺԱՐԱԿԱՆԻ և ՆՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ՁևԱՎՈՐԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՈՒՂԵՐՁԻ ՆԱԽԱԳԾԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՕՐԱԿԱՐԳՈՎ ԳՈՒՄԱՐՎԱԾ ԳՈՒՄԱՐՎԱԾ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏՈՒՄ ՀԱՐՑԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ազգային ժողովը ՈՐՈՇՈՒՄ Է.

Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազը մեկ քառորդի նախաձեռնությամբ «Կառավարության հրաժարականի և նոր կառավարություն ձևավորելու անհրաժեշտության մասին» Ազգային ժողովի ուղերձի նախագծի քննարկման օրակարգով գումարված Ազգային ժողովի արտահերթ նիստի օրակարգային հարցի քննարկման տևողությունը սահմանել մինչև երեք ժամ:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՈՒՂԵՐՁԸ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀՐԱԺԱՐԱԿԱՆԻ ԵՎ ՆՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սահմանադրության 103-րդ հոդվածը,

առաջնորդվելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Սահմանադրական օրենքի 98-րդ հոդվածը,

փաստելով, որ

1. Ազգային ժողովի կողմից հավանության արժանացած Կառավարության 2021-2026թ.թ. ծրագրի ամբողջական իրացումը ստանձնած գործող կառավարությունը ի վիճակի չէ կատարել իր հանձնառությունը:
2. Առաջացած մարտահրավերների հաղթահարումը վեր է Հայաստանի Հանրապետության իշխող կամ որևէ առանձին քաղաքական միավորի ուժերից:
3. Հայաստանի Հանրապետությանն ուղղված լրջագույն սպառնալիքներին դիմագրավելու, հայրենիքի պաշտպանությունը կազմակերպելու համար պահանջվում է համահայկական անբողջական համախմբում:

արձանագրելով, որ հրատապ անհրաժեշտություն է քաղաքական համաձայնությամբ, խաղաղ և անցնցում եղանակով ձևավորել հանրային հեղինակություն ունեցող, փորձառու անձանցից կազմված նոր կառավարություն, որն ամենասեղմ ժամկետներում կներկայացնի ստեղծված իրավիճակին համապատասխան նոր ծրագիր և կիրագործի երկրի դիմադրողականության մեծացմանը, պաշտպանության ու անվտանգության ամրապնդմանը, տարածքային ամբողջականության ապահովմանն ուղղված առաջնահերթ քայլեր՝

Ազգային ժողովն ուղերձով դիմում է՝

1. Հայաստանի Հանրապետության Կառավարությանը՝ վիճակով թելադրված ներկայացնել հրաժարական:
2. Հանրությանը՝ Հայաստանի Հանրապետությունում և սփյուռքում գործակցել և սատարել նոր կառավարությանը և համախմբվել նրա շուրջ:

Հիմնավորում

Հայաստանի շուրջ և Հայաստանում ստեղծվել է մի վիճակ, երբ

1. Ազգային ժողովի կողմից հավանության արժանացած Կառավարության 2021-2026թ.թ. ծրագիրը մի շարք առանցքային ուղղություններով տապալվել է: Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրացման և Արցախի անվտանգությունը երաշխավորելու փոխարեն, Արցախը հայաթափվել է: Հայաստանի ինքնիշխանությունը անմիջական սպառնալիքի տակ է: Գործող կառավարությունը ձախողել է Հայաստանի Հանրապետության պաշտպանությունը, անվտանգությունը, տարածքային ամբողջականությունը և սահմանների անձեռնմխելիությունը:

2. Հայաստանը ենթարկվել է ադրբեջանական ագրեսիայի: Թշնամին ներխուժել և գրավել է Հայաստանի Տավուշի, Վայոց Ձորի, Գեղարքունիքի, Սյունիքի մի շարք բնակավայրեր և դիրքեր: Թշնամու ներխուժումը շարունակվում է:

3. Թուրքիայի և Ադրբեջանի կողմից շարունակաբար Հայաստանին ներկայացվող պահանջները գործնականում անհնարին են դարձնում արժանապատիվ խաղաղության հասնելը:

4. Ստեղծված վիճակում բեկում մտցնելու, հայրենիքի պաշտպանությունը կազմակերպելու համար պահանջվում է համահայկական ուժականության բացառիկ համախմբում, որը Հայաստանի ներկա իշխանության կամ որևէ մեկ քաղաքական միավորի ուժերից վեր է: Պահի հրամայականն է, որ պետության կառավարումը քաղաքական համաձայնությամբ, խաղաղ և անցնցում կերպով ստանձնեն պրոֆեսիոնալ, հանրային հեղինակություն ունեցող և փորձառու անձինք:

5. Նոր կառավարությունը ամենասեղմ ժամկետում պետք է մշակի ստեղծված իրավիճակին համապատասխան նոր ծրագիր և իրագործի երկրի դիմադրողականության մեծացմանը, պաշտպանության ու անվտանգության ամրապնդմանը, տարածքային ամբողջականության ապահովմանն ուղղված առաջնահերթ քայլեր:

Որպես վերը նշված գնահատումների և առաջարկվող լուծման հնարավորություն ներկայացվում է Ազգային ժողովի համապատասխան ուղերձի նախագիծը: Ազգային ժողովի ուղերձը որոշակի հարցերի, իրադարձությունների և փաստերի վերաբերյալ Ազգային ժողովի քաղաքական դիրքորոշման արտահայտությունն է: Հետևաբար, Ազգային ժողովը, որպես առաջնային մանդատ ունեցող բարձրագույն ներկայացուցչական մարմին պարտավոր է իր մասնակցությունը բերել՝ ստեղծված ծանր պայմաններում քաղաքական հանգուցալուծմանը: